

Ապահովագիր վասն պատգաւաւորաց Լեւոնի (1)

ԹԱԳԱՒՈՐՆ իւր Արքունի Հրովարտակով, որ պիտի զօրէ մինչեւ ցմերձակայ տօն Սրբութեան Երանուհւոյ Կուսին (= Տեառնընդառաջ), կ'առնու առաջիկայ Ապահովագրովս իւր առանձին հովանաւորութեան եւ պաշտպանութեան ներքեւ զՓրանկիսիոս Միր՝ Սենեակալ Մեծափառ Իշխան Հայոց Արքայի, եւ զՅովհաննէս Միր՝ Սենեկապետ նոյն թագաւորին, որոնք արդէն Գաղիոյ Կողմերը կը գտնուին, հինգ ձիաւորներով՝ ի միասին իրենց ընկերակցութեան համար, Անգլիական Տէրութեան մէջ՝ իւր իշխանութեամբն ու զօրութեամբ, երբ իրենք հոս գան ու մնան, եւ ասկից նորէն Գաղիոյ երկիրը վերադառնան. եւ միանգամայն իրենց ամեն ինչքերն ու կազմածները:

Վկայ է Արքայն, առ Դղեկին Ուիլիստրի, ի 27 Սեպտեմբերի:
'Ի ձեռն նորին Արքայի,

Լեւոնի կրկին անգամ Լոնդոն երթալուն ապացոյցը կը գտնուի յիշեալ Բայմերի մէջ (*Foedera*, հտ. Գ, մասն Դ, եր. 38), որ յանուն Լեւոնի տրուած 1392 ղեկաւ. 11 թուակիր հետեւեալ ապահովագիրը կը հրատարակէ(2).

Երկրորդ ապահովագիր տաւալ Լեւոնի (3)

ԹԱԳԱՒՈՐՆ իւր Արքունի Հրովարտակով, որ մէկ տարի պիտի զօրէ, ըստ հաւանութեան իւր Ժողովոյն, այս ապահովութեան թրջութով կ'առնու իւր առանձին պաշտպանութեան եւ հովանաւորութեան ներքեւ իրեն սիրելի Եղբայրակից Լեւոն Հայոց Թագաւորն՝

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ *Document XXIV*.

(2) Այս վաւերագրով Լեւոնի երկրորդ անգամ Լոնդոն երթալն հաստատելէ ետք՝ միանգամ ընդ միւս կը ներքուի Հոլինսէդի հետեւեալ բարբառջանքն ալ. «Ամ Տեառն 1386, յամի բազաւորութեան (Հոլիւարդի)՝ 10. — Նոյն ասեցները Հայաստանի բազաւոր խնդրեց որ իրեն ապահով ուղեւորութիւն մը շնորհուի վերսին այս երկիրը (Անգլիա) գալու եւ բազաւորին հետ Անգլիայի եւ Ֆրանսայի բազաւորութիւններու միջեւ իրագործելի խաղաղութեան մը մասին խօսելու. բայց կասկածուելով որ իր միտքն ոչ քի բարի վախճանն էր, այլ բազաւորին շնորհալի ձեռքերէն մեծ նուէրներ ստանալով անձնապէս օգտուի, իր խնդիրը չշնորհուեցաւ: » (*Holinshed, Chronicles of England*, fs. Բ, եր. 453):

(3) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ *Document XXV*.